



245. ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆԸ

Մե մարդ մտածում ա, ասում ա. «Մե տուա եմ կյալու ուրիշ աշխարք ման կյամա: Կալիս ա, պատմում մե անծանոթ քաղաք: Պատահում ա մի մարդու էս մարդն իսկույն ճանաչում ա, որ սա օտար մարդ ա, ասում ա.—Այ օտար մարդ, տու, էրեւմ ա, որ մեր երկրից շես: Արի՛, կնանք ինձ մոտ, ես միշտ սովորություն ունեմ օտարներին հյուրասիրեմ:

Պերում ա, տանում իրա տունը: Մեծ շենք, էրկու հարկանի, իրեք հարկանի՝ բանցրացրեց:

Հիմա, շենքերի միջից մենում ա, սենյակից-սենյակ անցնում ա: Էս մարդը զարմացած ա, թե ինչ տեսակ սենյակներ ա պատրաստած: Մի սենյակում մի մեծ զալ, մի մարդ, ժնշիլ տրած տրա ոտը, իսկ սեղաններն էլ լցած ամեն տեսակ ուտելիքներ, խմելիքներ, ծաղիկներ: Էս մարդուն տըսալ, անցալ:

Երկրորդ սենյակը կնաց, երրորդում նստավ: Զվանդը վերցեց, զվանդի տվեց տանտերը, էկավ մէ կեղեցիկ կնիգ: Ասաց.— Հաց պեր ուտենք:

Կինը կուխ տվեց ու հետ տարձավ: Պայց էս մարդը տեսավ՝ էս կնոջ ոտից մի ոսկի ժնշիլ կապած, մի կանգ էլ ժնշիլ կապած:

Էդ մարդը տեսավ, որ կանգը ոտից քաշ տալով կնաց ու էկավ: Տանտերը հարց տվեց, ասավ.— Հավանո՞ւմ ես էդ կնոջը: Թե.— Հավանում եմ:

Թե.— Ի՞նչ ես կարծում, ով կըլնի:

Թե.— Կարծիքս կնոս ա, որ ծեր ծառան կըլնի:

Թե.—Չէ՛, սա իմ կնիգն աւ Հաւանեցի՛ր:

Ասում աւ.—Հա՛, շատ կեղեցիկ աւ:

—Բա ինչքան որ իրա կեղեցկույթունն է, ինչքան էլ իրա խելքն ա կեղեցիկ:

Ասում աւ.—Պա էդ ի՞նչ ժնշիլ ես կապել ոտից:

Ասում աւ.—Էս էլ կասեմ քեզ: Մի օր ես կնոսմ եմ օտարություն, կնոջս հարց տվիմ, ասիմ. «Կնի՛գ, ես կնոսմ եմ օտար երկիր, էսկան ժամանակից կգամ»: Կնացի, կործա շահաշողվաւ, կայարանից հետ դարձամ: Էկամ, տըսնեմ՝ իմ կինս էս կանգի տիրոջ հետ պառկած սենյակիս մեջ: Միմյան էսկանը լսամ, որ կինս ասաց.—Երանի չի քու կլուխդ ինձանից անբաժան մնա: Ես էդ պանը լսա, կնհատի կնոջս խոսքը, էս մարդուն սպանեցի: Հարուր հազար մանեթ փող եմ տվել, էդ ոսկի ժնշիլը կապել կանգին, կապել եմ կնոջս ոտին, իրա իղձը կատարել եմ: Էդ էն կանգն է, որ իրա հետ կնոսմ ա, կյալիս աւ Ես էս պանը քեզ՝ օտար մարդին եմ կանչել ասել, մեր երկրին շեմ ասում: Տու էլ կնա, ծեր օտար երկրներում ասա, որ էդպես մարդիկ էլ կան:

Էդ մարդը շնորհակալություն հայտնել: Ասաց.—Պա, էն մարդն ինչո՞ւ էր կապած:

—Հա՛,—էնի իմ հերս ա, մեծահասակ մարդ աւ Եթե տուրս ա կյալիս փողոց, փիս պան չի սիրում, ուրիշները որ փիս խոսք են ասում, անհամբեր մարդ ա, խառնվում ա ըտրանց խոսքին, կռիվ անում: Ես էլ որ տուրս եմ կյալիս փողոց, ասում են. «Քու հերն ըսենց ա: Զղայնանում եմ: Սրա հմար էլ հորս փակ եմ պահում: Մեծահասակ մարդը հավասար ա փոքր երեխայի: Հորս փակի տակ եմ պահում, որ նրա խաթրին, պատվին կպնող շըլնի, ես էլ ուրիշի պատվին չկպնեմ:

